ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. Սեպտեմբերի 19-ից սեպտեմբերի 23-ը ք.Նագպուր (Հնդկաստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

- Նարինե Միկիչյան
- Իսկուհի Բաղդասարյան
- Նորայր Մուղդուսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

- ՀՀ ՊԵԿ Միջազգային համագործակցության վարչության հարկային համագործակցության բաժնի գլխավոր հարկային տեսուչ,
- ՀՀ ՊԵԿ Միջազգային համագործակցության վարչության միջազգային ծրագրերի իրականացման աջակցման և արարողակարգի բաժնի մաքսային տեսուչ
- ՀՀ ՊԵԿ Հարկային համալիր ստուգումների վարչության թիվ 6 բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հնդկաստանի Հանրապետություն, ք. Նագպուր, սեպտեմբերի 20-ից 22-ը

4. Հրավիրող կողմը՝

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի քարտուղարություն, Հնդկաստանի ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի և Նագպուրի Ուղղակի հարկերի ազգային ակադեմայի կողմից՝ ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնություն»:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել «Արդյունավետ հարկային համագործակցության ռազմավարություն. ենթադրելիորեն համապատասխանության դերը տեղեկությունների փոխանակման գործընթացում» խորագրով ուսումնական միջոցառմանը: Մասնակիցներին ներկայացվել են միջազգային չափանիշներն ու ուղեցույցները, որոնք կարևոր են

տեղեկությունների փոխանակման գործընթացում ենթադրելիորեն համապատասխանության գնահատման տեսանկյունից:

Մասնակիցները ծանոթացել են հարկման նպատակով հարցվող տեղեկությունների ենթադրելիորեն համապատասխանության մի շարք վավերապայմաններին և համապարփակ գիտելիքներ ստացել ենթադրելիորեն համապատասխանության եզրույթի վերաբերյալ:

6. Քննարկված թեմաները՝

Ս. թ. սեպտեմբերի 20-ից 22-ը կայացած «Արդյունավետ հարկային համագործակցության ռազմավարություն. ենթադրելիորեն համապատասխանության դերը տեղեկությունների փոխանակման գործընթացում» խորագրով ուսումնական միջոցառման ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում.

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի կողմից մշակված հարցման հիման վրա հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման ենթադրելիորեն համապատասխանության եզրույթն ու հիմնական մարտահրավերները,
- Միջպետական հարկային համագործակցության և համակարգման դերը տեղեկությունների փոխանակման գործընթացի արդյունավետության ապահովման գործում,
- Ենթադրելիորեն համապատասխանությունը տրանսֆերային գնագոյացմանն առնչվող հարցումներում (գործնական խմբային աշխատանքներ՝ փաստացի օրինակներով),
- Հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման խմբային հարցման ենթադրելիորեն համապատասխանությունը (գործնական խմբային աշխատանքներ՝ փաստացի օրինակներով):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Միջացառման ժամանակ որպես դասավանդողներ հանդես են եկել ՏՀԶԿ Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի ներկայացուցիչները: Միջոցառմանը մասնակցում էին ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» մասնակից պետություններից Հայաստանի Հանրապետության, Հնդկաստանի Հանրապետության, Մալդիվների Հանրապետության, Ինդոնեզիայի Հանրապետության, Մալայզիայի, Մոնղոլիայի Հանրապետության, Թաիլանդի Թագավորության հարկային մարմնի ներկայացուցիչները, քննարկվել են «Արդյունավետ հարկային համագործակցության ռազմավարություն. ենթադրելիորեն համապատասխանության դերը

տեղեկությունների փոխանակման գործընթացում» դասընթացի համար հետաքրքրություն առաջացնող հարցեր:

Միջոցառման ընթացքում ներկայացվել են գործնական կիրառմանն առնչվող շնորհանդեսներ, ելույթ են ունեցել բոլոր պետությունների ներկայացուցիչները, ներկայացնելով՝ երկրում կիրառվող տեղեկությունների փոխանակման գործընթացը՝ ընդգծելով ենթադրելիորեն համապատասխանության դերն այդ գործընթացում, ինչպես նաև Ինդոնեզիայի Հանրապետության և Մալայզիայի ներկայացուցիչները ներկայացրել են հարկային մարմնի փորձը տեղեկությունների փոխանակման գործընթացում ենթադրելիորեն համապատասխանության գնահատման տեսանկյունից:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել առաջիկա դասընթացների և համաժողովների կազմակերպման մասով, որոնք ուղղված կլինեն ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» երկրների միջև համագործակցության բարելավմանը, տեղեկատվության արագ և օպերատիվ փոխանակմանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Առաջիկա դասընթացները և համաժողովները կազմակերպվելու են ՏՀԶԿ Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի քարտուղարության և ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի «Ասիայի նախաձեռնության» կողմից: Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին բարձրացնել ՀՀ ՊԵԿ-ում կատարվող համապատասխան աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդրելու նպատակով, ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը միջազգային փորձագիտական հանրույթում, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

26.09.2023թ